Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ

U3787420000

[1] Դուրս գրման ամսաթիվ		
23	Հուլիս	2018 թ.
[4] Մատակարարման ամսաթիվ		
23	Հուլիս	2018 թ.

Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[2] Սերիա	[3] Համար
U	5787420000

Ճշգրտվող հաշվի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	[5] Գնման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (արտոնություններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 9 4 0 7 9 8 8
[9] Անվանումը	ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՐՁ. ԴԻՍՊ. Փակ բաժնեհիրական ընկերություն (ՓԲԸ)
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 9 4 0 7 9 8 8 7 1
[11] Բանկային տվյալները	ՎՏԲ Հայաստան բանկ Կապան մ/ճ N 16022457801500
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ՍՅՈՒՆԻՔ ԿԱՊԱՆ ԿԱՊԱՆ Բաղաթերի 48
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձարանական վարչություն N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՊԱՄԻՊՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն: Լիազորագիր: Համար: Ամսաթիվ:

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

Հ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր քանակը (ծավալը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Թիվ 41100418 բբ. գործով դատահոգեբուժական փորձաքննություն	դեպք	1	32833		32833	20	6566.6	39399.6
Ընդամենը						32833	X	6566.6	39399.6

Դուրս գրող՝ ALAVERDYAN ANAHIT 671590040
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անուն, ազգանուն)

պաշտոնը ստորագրությունը (անուն, ազգանուն)

23/07/2018 15:11:22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

10.04.2018թ. ք. Կապան

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Կարեն Ալավերդյանս, քննարկելով վարույթիս թիվ 41100418 քրեական գործի նյութերը՝ ըստ մեղադրանքի Միեր Նվերի Մանուչարյանի, Սասուն Կլիմենտի Կարապետյանի և Արտաշես Սամվելի Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 14-րդ կետերով,

պ ա ր զ ե ց ի

2018թ. փետրվարի 17-ին՝ ժամը 21 [30]-ի սահմաններում, Միեր Նվերի Մանուչարյանը մորը՝ Հասմիկ Կրիմետի Կարապետյանին, հորեղբոր՝ Վալերիկ Գառնիկի Մանուչարյանի կողմից նախկինում արտամուսնական կապ ստեղծելու առաջարկություն անելու կապակցությամբ ծագած վրեժի շարժառիթով վերջինիս մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ նախնական համաձայնության գալով մորեղբոր՝ Սասուն Կլիմենտի Կարապետյանի և ազգականի՝ Արտաշես Սամվելի Հակոբյանի հետ, գնացել են տուժողի բնակության վայր՝ Քաջարանի Չարենցի փողոցի թիվ 2 շենքի մոտ, որտեղ Արտաշես Հակոբյանը բնակարանից դուրս է կանչել Վալերիկ Մանուչարյանին և իրենց նպատակը իրագործելու հարցում հնարավոր խոչընդոտներից խուսափելու համար նրան տարել են չբնակեցված վայր հանդիսացող՝ Քաջարան-Կապան ավտոճանապարհի սկզբնամասում գտնվող չգործող բենզալցակայանի հարակից տարածք: Այնուհետև, փոխադարձ լրացնելով համատեղ դիտավորությամբ ընդգրկված հանցանքի կատարմանն ուղղված միմյանց գործողությունները, գլխով, ոտքերով և ձեռքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել Վալերիկ Մանուչարյանի գլխին և մարմնի տարբեր մասերին՝ գլխուղեղի սալջարդի ձևով վերջինիս առողջությանը պատճառելով կյանքի համար վտանգավոր վնաս, ապա ուղեկցել են Քաջարանի Շահումյան փողոցի թիվ 1 շենքի մոտ և հեռացել, որտեղ էլ ստացած վնասվածքների հետևանքով անզգուշությամբ առաջացել է տուժողի մահը:

Դեպքի առթիվ 2018թ. փետրվարի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:

2018թ. փետրվարի 21-ին Միեր Մանուչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 14-րդ կետերով, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 23.12.2014թ. թիվ 3545 որոշման հիման վրա Միեր Մանուչարանը ճանաչվել է խաղաղ ժամանակ զինվորական ծառայության համար ոչ պիտանի «դեզադապտացիայով պայմանավորված ձգձգվող հիսթերիկ դեպրեսիվ հակազդում արատավորված անձի մոտ» ախտորոշմամբ:

«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ից ստացված գրության համաձայն՝ Միեր Մանուչարյանը նյարդահոգեբուժական դիսպանսերում և նարկոլոգիական կաբինետում հաշվառված չէ:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Միհր Մանուչարյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը և քրեական գործով նշանակություն ունեցող այլ հանգամանքներ պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ գիտելիքներ, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 243-245 և 248 հոդվածներով,

ո ր ո շ ե ց ի

1. Վարույթիս թիվ 41100418 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ փորձագետներին:

2. Փորձագետներին ներկայացնել Միհր Նվերի Մանուչարյանին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տրամադրել քրեական գործի նյութերը:

3. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Միհր Մանուչարյանը որևէ քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակով /այսուհետ՝ հոգեկան հիվանդություն/ տառապու՞մ է, թե՞ ոչ, եթե այո, ապա, ինչպիսի՞ հոգեկան հիվանդությամբ և երբվանի՞ց

բ/ եթե Միհր Մանուչարյանը տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, ապա իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակ կամ դրանից հետո, հաշվի առնելով հոգեկան հիվանդության բնույթն ու աստիճանը, կարո՞ղ էր գիտակցել իր գործողության վտանգավորությունը և ղեկավարել դա, թե՞ ոչ

գ/ Միհր Մանուչարյանը իրեն մեղսագրվող արարքը կատարելու ժամանակահատվածում կամ դրանից հետո տառապե՞լ է այնպիսի հոգեկան խանգարմամբ, որի հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր գործողության փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը կամ ղեկավարել դա, թե՞ ոչ

դ/ եթե Միհր Մանուչարյանը որևէ հիվանդությամբ կամ հոգեկան խանգարմամբ տառապում է, ապա հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ /իր կամ այլ անձանց համար վտանգ ներկայացնու՞մ է, թե՞ ոչ/

ե/ Միհր Մանուչարյանը իր հոգեկան վիճակով կարո՞ղ է ճիշտ ընկալել գործի համար համար նշանակություն ունեցող հանգամանքները և վերարտադրել դրանք, թե՞ ոչ

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև որոշմամբ չառաջադրված այն հարցերին, որոնք կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն դատական հոգեբույժի իրավասության մեջ, որոնց պարզաբանումը կարող է նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար:

4. Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով և նախաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ Կ. Ա. Ալավերդյան